

*Մզիա Ծերեթելի*

**ԾԱԼԿԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋԵՄՔԱՅԻՆ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՀԱՄԱՐ**

Հոդվածը հիմնվում է Ռուսթավելիի հիմնադրամի «Անվտանգության էթնիկական սասպեկտները բազմազգ հասարակության մեջ» նախագծի շրջանակներում անցկացված հետազոտման նյութերի վրա:

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

Հոդվածում քննարկված են Ծալկայի շրջանի բնակչության սոցիալ-հոգեբանական և մշակութային կլիմայի առանձնահատկությունները, այստեղ բնակվող էթնիկական խմբերի հարաբերությունների առանձնահատկությունները և նրանց ազդեցությունը պետական լեզվի յուրացման վրա: Հետազոտությունն անց է կացվել հարցազրույցի մեթոդով: Հետազոտությունը բացահայտել է տարբեր էթնիկական խմբերի հասարակական ինտեգրմանը խանգարող գործոնները, որոնց թվում կարևորագույններից մեկը բնակչության համար ընդհանուր հաղորդակցման լեզու չունենալն է: Վրաց լեզուն միայն պետական լեզվի պաշտոնական կարգավիճակ ունի, քանի որ բնակչության մեծ մասը միայն սեփական լեզվին է տիրապետում: Իսկ ոչ բարենպաստ սոցիալ-հոգեբանական կլիման վրաց լեզվի ուսանման կարևորագույն արգելքներից մեկն է:

Վրաստանում քաղաքացիական հասարակության ձևավորման և նրա զարգացման համար անչափ նշանակալի պայման է Վրաստանում բնակվող տարբեր էթնիկական խմբերի հասարակական ինտեգրումը: Կարելի է ասել, որ այս գործընթացում, այլ գործոնների հետ, վճռական դեր է կատարում ընդհանուր հաղորդակցման լեզվի գոյությունը, որի գործառույթը, պարզ է, պետք է կատարի պետական լեզուն: Այս տեսակետից ոչ վրացալեզու բնակչությանը պետական լեզուն սովորեցնելը երկրի զարգացման համար պարտադիր կարևորագույն խնդիր է: Նպատակին հասնելու համար Կրթության և գիտության նախարարությունը բնագավառի տեղացի և օտարերկրյա փորձագետների հետ կազմել է հատուկ քաղաքականության

փաստաթուղթ, ինչն, իհարկե, կայուն քաղաքական և օրենսդրական հիմք է ստեղծում Վրաստանի բազմազգ տարածաշրջաններում վրաց լեզվի ուսուցման հատուկ ծրագրերի իրականացման համար: Դպրոցի թե ավելի լայն հասարակության մակարդակի վրա կազմած տարբեր ծրագրերի արդյունավետ ներդրման համար նշանակալի է ուսանում-ուսուցման քաղաղրամասերի կատարելագործումը, որակյալ մանկավարժների պատրաստումը, բարձրորակ ուսումնական ծրագրերի և դասագրքերի կազմումը: Թեպետ, գործընթացի հաջող իրականացման համար անհրաժեշտ է նաև նախատեսել բազմալեզու տարածաշրջաններում սոցիալ-հոգեբանական և մշակութային կլիման: Մշակութային հասարակության

վերաբերմունքները և տրամադրվածությունները երկրորդ լեզվի նկատմամբ, նրա յուրացման պատճառաբանվածության բնույթը և հզորությունը, նաև հասարակությունում առկա միջանձնային հարաբերությունները և էթնիկական կարծրատիպերը հաճախ վճռական դեր են կատարում երկրորդ լեզվի յուրացման հաջողություն-անհաջողության մեջ (Գաս, Սելինկեր, 2001, 2001, Վուկֆոլկ, 2007)։

Տվյալ հետազոտության նպատակը հանդիսանում է Ծալկայի շրջանի բնակչության սոցիալ-հոգեբանական և մշակութային կլիմայի ուսումնասիրումը և պետական լեզվի յուրացման վրա ազդող գործոնների գնահատումը։

Ծալկայի շրջանը պատմականորեն հանդիսանում է Վրաստանի բազմալեզու անկյուններից մեկը։ Այստեղ ապրում են տարբեր կրոնների և էթնիկական մշակույթների ժողովուրդներ՝ հույներ, վրացիներ, հայեր, ադրբեջանցիներ և այլն։ Վերջին ժամանակներում Վրաստանում իրականացված քաղաքական, բնական և սոցիալ-տնտեսական փոփոխությունների ազդեցությամբ, այս տարածաշրջանն էլ ավելի ծանրաբեռնվեց բազմազգության տեսանկյունից։ Այստեղ բնակվող հույների մեծ մասը լքեց իր հողը և բնակման տեղափոխվեց Հունաստան։ Իսկ մյուս կողմից՝ Վրաստանի կառավարությունը այստեղ վերաբնակեցրեց բնական աղետների հետևանքով տուժած և անապաստան մնացած ավանների և աջարների։ Այսպիսով էթնիկական և դավանանքային տեսակետից առանց այն էլ բազմերանգ պատկերը էկոմիգրանտների վերաբնակեցմամբ էլ ավելի խայտաբղետ դարձավ։

Միևնույն ժամանակ, տարբեր է նաև այդ խմբերի սոցիալ-տնտեսական կարգավիճակը։ Ծիշտ է հույների մեծամասնությունը լքել է երկիրը, սակայն նրանց սեփականության մեջ են մնում իրենց տները, տնամերձը և հողամասերը, իսկ նորաբնակների (էկոմիգրանտների) մեծ

մասը սեփականության մեջ չունի ո՛չ տուն, ո՛չ էլ հող։

Ինչպես հայտնի է, իշխանության, ռեսուրսների և միջոցների անհամաչափ բաշխումը կարող է հանդիսանալ հնարավոր էթնիկական լարվածության աղբյուր։ Հնարավոր ռիսկ-գործոններին է պատկանում տարբեր էթնիկական խմբերի միջև լեզվական, կրոնական և ավանդական մշակույթների տարբերությունը նույնիսկ։

Էթնիկական լարվածությունը դրսևորվում է հոգեբանական մակարդակում՝ էթնիկական խմբերի միջև շահերի և հայացքների անհամապատասխանության, սեփական և ուրիշ խմբի փոխդիմակայող կարծրատիպերում, էթնոցենտրիստական հատկություններում և բացասական տրամադրվածություններում։

Միջխմբային ընկալման կարևորագույն մեխանիզմներից մեկը ներխմբային ֆավորիտիզմն է, որը ենթադրում է սեփական խմբի և նրա անդամների նկատմամբ բարյացակամություն և նրանց առավելության շնորհում՝ այլ խմբերի և նրանց անդամների համեմատ (Ստեֆանենկո, 2004)։

Ներխմբային ֆավորիտիզմի ամենատարածված ձևը էգոցենտրիզմն է։ Սա երևույթների նկատմամբ այնպիսի տեսակետ է, որի ժամանակ սեփական խումբն ամեն ինչի կենտրոնում է, ուրիշ խմբեր քննարկվում են սեփական խմբի համեմատությամբ և նրա վրա հիմնվելով։

Ժամանակակից հետազոտողները էգոցենտրիզմը քննարկում են որպես մարդկանց բնորոշ հատկություն՝ «ընկալել և գնահատել կենսական երևույթները սեփական էթնիկական խմբի ավանդույթների և արժեքների լույսի տակ, որը համարվում է չափանմուշ կամ օպտիմում (Մայերս, 2000, Ստեֆանենկո, 2004)։

Բրունները և Կեմպելը առանձնացնում են էգոցենտրիզմի հետևյալ հիմնական բնութագրիչները.

1. Սեփական մշակույթի տարրերի-նորմերի և արժեքների, որպես

բնականի և ճշմարիտի, ընկալում, իսկ այլ մշակույթներինը՝ որպես ոչ բնական և ոչ ճիշտ:

2. Սեփական խմբի սովորույթները համարել համապիտանի:
3. Կարծիք այն մասին, որ մարդկանց համար նորմալ է սեփական խմբի անդամի հետ համագործակցությունը, նրան օգնելը, նրան առավելության շնորհելը, նրանով հպարտանալը, նրան վստահելը և այլ խմբի նկատմամբ անվստահությունը և նույնիսկ թշնամանքը:

Պարտադիր չէ երեք բնութագրիչների միասին գոյությունը նրա համար, որ տեղ գտնի էզոցենտրիզմը: Այնտեղ, որտեղ կա երրորդ բնութագրիչը, տեղ ունի նաև էզոցենտրիզմը:

Էզոցենտրիզմը, որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Մի կողմից՝ այն նպաստում է խմբի ամբողջականության, նույնականության և յուրահատկության պահպանմանը, սակայն, մյուս կողմից՝ այն ի հայտ է գալիս որպես միջխմբային արգելք:

Հայտնի է, որ էզոցենտրիզմը և նրա բացասական կողմն առանձնահատուկ սրությամբ դրսևորվում են այսպես կոչված փոքր ազգերի, էթնիկական փոքրամասնությունների կամ էթնիկական միգրանտների մեջ: Երևույթը հզորացնում են սոցիալական գործոնները, իսկ առանձնապես այլ խմբերի համեմատ ցածր սոցիալական կարգավիճակը կամ հակամարտությունը:

Թեպետ, խմբերի և նրանց անդամների էզոցենտրիզմը կարող է տարբեր հզորությամբ դրսևորվել, սակայն բոլոր դեպքերում այն կարող ենք քննարկել որպես տեսական կոնտինիում երկու ծայրահեղ բևեռներով: Այն արտահայտում է շերտավորում փոխհարաբերություններում:

Որպես միջխմբային շերտավորման ստուգիչ հանդես են գալիս բևեռային կերպարները, երբ կոնֆլիկտային խմբերն իրենց վերագրում են միայն դրական հատկություններ, իսկ դիմակայող խմբերին՝ միայն բացասական հատկություններ:

Հայտնի է նաև այսպես կոչված հայելանման ընկալման ֆենոմեն, որը դիմակայող խմբին վերագրում է սեփական խմբին հատկացված դրական հատկությունների հակառակ բացասական հատկություններ:

Որքան ավելի հեռու են խմբերի կողմից արտահայտված դիրքորոշումները թե գնահատումները կենտրոնից, այնքան ավելի հզոր է խմբերի միջև դիմակայությունը և ընդհակառակը՝ որքան ավելի մոտ են խմբերի կողմից արտահայտված դիրքորոշումները և գնահատումները կոնտինիումի կենտրոնին, այնքան ավելի պակաս է լարվածությունը և, համապատասխանաբար, ավելի են ընդունում միմյանց:

Որպես միջխմբային շերտավորման հիմնական մեխանիզմ համարված է կարծրատիպացումը և ատրիբուցիոն գործընթացները, որոնց համաձայն անհատի հատկությունները, նրա վարքը և նվաճումները բացատրված են խմբային պատկանելության հիման վրա:

Սոցիալական կարծրատիպերը՝ սոցիալական օբյեկտների պարզեցված, սխեմատիկ պատկերներ են, որոնք ընդհանուր են խմբի անդամների մեծամասնության համար: Կարծրատիպերի յուրացումը սկսվում է վաղ մանկությունից և, սովորաբար, նրանց հիմք են հանդիսանում ոչ թե անմիջական փորձը, այլ այսպես կոչված երկրորդային աղբյուրները: Այլ սոցիալական կարծրատիպերի թվում մարդիկ ունեն նաև էթնիկական կարծրատիպեր, էթնիկական խմբերի պարզեցված պատկերներ: Այնպես, ինչպես այլ տիպի սոցիալական կարծրատիպերը, էթնիկական կարծրատիպերին ևս բնորոշ է այն կրող խմբի անդամների միջև բարձր աստիճանի տարածվածություն (այլ կերպ ասած, համաձայնության բարձր աստիճան): Այսպիսով, էթնիկական կարծրատիպերի բացահայտման համար անչափ արդյունավետ է այսպես կոչված «հատկությունների վերագրման» մեթոդի կիրառումը, որը կայանում է սեփական կամ այլ էթնիկական խմբի որոշ հատկանիշների վերագրման և նրանց տարածման աստիճանում:

Հետազոտողներն առանձնացնում են կարծրատիպացման երեք հիմնական գործառնություններ: Դրանք են՝ հոգեբանական, սոցիալ-հոգեբանական և սոցիալական գործառնություններ:

Հոգեբանական գործառնության էությունը կայանում է հոգեկան էկոնոմիզմի սկզբունքի մեջ, ինչը նկատի ունի նվազագույն կոգնիտային ծախսերով առավելագույն տեղեկության վերամշակում սոցիալական աշխարհի և նրա երևույթների մասին և նրա բովանդակության հեշտացված ընկալում:

Իսկ կարծրատիպերի սոցիալ-հոգեբանական գործառնությը կայանում է միջխմբային շերտավորման մեջ: Այն դրսևորվում է սեփական խմբի օգտին արված գնահատման տեսքով և նպաստում է դրական խմբային նույնականության պահպանմանը: Հենց այդ պատճառով ինքնակարծրատիպերը, սովորաբար, ավելի դրական են, քան՝ հետերոկարծրատիպերը: Իսկ կարծրատիպացման սոցիալական գործառնություն է հանդիսանում, մի կողմից՝ խմբերի միջև գոյություն ունեցած հարաբերությունների և նրանց պատճառների բացատրությունը, և մյուս կողմից՝ գոյություն ունեցած միջխմբային հարաբերությունների արդարացումը: Նրանք երկուսն էլ ծառայում են գոյություն ունեցած հարաբերությունների պահպանմանը:

Էթնիկական կարծրատիպերի կարևորագույն հատկություններից մեկն է նրանց հուզական-գնահատողական բնույթը: Այլ կերպ ասած, կարծրատիպերում և այդ թվում նաև էթնիկական կարծրատիպերում միավորվում են կոգնիտային և հուզա-գնահատողական բաղադրամասերը: Հուզա-գնահատողական բաղադրամասն արտահայտում է վերաբերմունքի, ընդունել-չընդունելու աստիճանը (ինչպիսին է համակրանքը, ատելությունը, սերը, հավանելը կամ ուղղակի ընդունել-չընդունելը), իսկ կոգնիտայինը՝ բովանդակությունը: Այստեղից ելնելով՝ որոշակի բովանդակություն ունեցող ռազմավարության հուզա-գնահատողական բաղադրամասը հնարավոր է դրական կամ բացասական լիցք կրող լինել:

Ֆիքսը առանձնացնում է ատելության կարծրատիպը, որը, սովորաբար, հատկացվում է «օտար», «ուրիշ» ցածր կարգավիճակ ունեցող և ոչ իրազեկ խմբերին, որոնք միաժամանակ գնահատվում են որպես «ասոր» խումբ: Ըստ Ֆիքսի սեփական խմբի նկատմամբ, սովորաբար դրսևորվում է «հիացմունքի» կարծրատիպ, որի համաձայն այս խմբին վերագրվում է իրազեկվածություն, բարձր կարգավիճակ և «ջերմություն»: Սակայն բացի դրական և բացասական կարծրատիպերից գոյություն ունեն նաև նախանձի և պատերճալիզմի այսպես կոչված ամբիվալենտային կարծրատիպեր: Նախանձը բնորոշ է հարաբերությունների բարձր կարգավիճակով, կոմպետենտ, խմբերին: Իսկ պատերճալիզմը՝ հարաբերությունների բարձր կարգավիճակով, ոչ իրազեկ, սակայն «ջերմ» խմբերին:

Այսպիսով, դրական կարող է լինել լիցքավորված ոչ միայն «սեփական» խմբի կարծրատիպը, այլև այն ուրիշ խմբերինը, որոնք չեն առաջացնում վտանգի զգացում, նրա պատճառով, որ գոյություն ունի սեփական ուժից բխող անվտանգության զգացում: Իսկ այն խմբերի նկատմամբ, որոնցից վտանգ է բխում, հնարավոր է դրսևորվի միաժամանակ նախանձ և հարգանք:

Էթնիկական կարծրատիպերի երկրորդ նշանակալի հատկանիշ է համարվում կայունությունը նոր տեղեկության նկատմամբ: Էթնիկական տեղեկության կայունությունը սպացուցված է բազմաթիվ էմպիրիկ հետազոտություններով: Որոշված է, որ նրանց փոփոխությունը, սովորաբար, ընթանում է դանդաղ և հաջորդականությամբ:

Կարծրատիպին բնորոշ է նաև բարձր որակի համաձայնություն, կամ սոցիալական «կոնսենսուս»՝ կարծրատիպը կրող խմբում հայացքները համընկնելու բարձր որակ: Կարծրատիպերի ևս մեկ հատկությունն է անճշտությունը:

Կարծրատիպերի վրա ազդեցություն են ունենում իրական էթնիկական հարաբերությունները: Այս հարաբերությունների բնույթը՝ համագործակցությունը թե մրցակցությունը,

դոմինանտությունը թե ենթարկվելը, նշանակալիորեն պայմանավորում են էթնիկական կարծրատիպի հիմնական բնութագրիչները. բովանդակությունը, ուղղությունը, բարյացակամության աստիճանը և նույնիսկ ճշտորոշությունը:

Տարբեր էթնիկական խմբերի հարաբերություններում առկա հիմնախնդիրների պատճառներից մեկն այն է, որ նրանք չեն հասկանում միմյանց վարքի պատճառները և այդ պատճառով անում են սխալ գնահատումներ: Բազմաթիվ հետազոտությունների հետևանքով, որոնք անց են կացվել ինչպես անհատական, այնպես էլ միջխմբային մակարդակով, որոշվել է, որ «սեփական» խմբի դրական և «ուրիշ» խմբի բացասական վարքի պատճառ են համարվում ներքին, անհատական գործոնները: Իսկ «սեփական» խմբի բացասական վարքերը և «ուրիշի» խմբի դրական վարքերը բացատրվում են արտաքին միջավայրի գործոնների ազդեցությամբ: Այսպիսի բնորոշումները, որոնց միջոցով բացատրվում են նաև «սեփական» և «ուրիշ» խմբերի հաջողությունը և անհաջողությունը, հայտնի են էթնոցենտրային բնորոշումներ անվանումով:

Այսպիսով, հոգեբանության մեջ որոշված է (Մայեր, 2000, Ստեֆանենկո, 2004, Հոգեբանությունը և մշակույթը, 2003), որ «սեփական» և «ուրիշ» խմբի և նրա անդամների գնահատման ժամանակ գոյություն ունի անհամաչափություն, որոնք դրսևորվում են նրանց ինչպես կոնկրետ հատկություններին (անհատական բնութագրիչների) հատկացնելու մակարդակով, այնպես էլ նրանց դրական և բացասական վարքը բացատրելու մակարդակով: Միևնույն ժամանակ, որքան ավելի մեծ է շերտավորումը և էթնիկական դիմակայությունը, այնքան ավելի մեծ է անհամաչափությունը փոխադարձ գնահատման ժամանակ:

Ծավկայի շրջանում առկա էթնիկական իրավիճակի նախատեսումով՝ նշանակալի է հնարավոր լարվածության այն սոցիալ-հոգեբանական գործոնների ուսումնասիրումը, որոնք գիտակցության

մակարդակով են ի հայտ գալիս: Ինչպես նշվել է վերևում, սրանք էթնիկական կարծրատիպերն են, ավտո և հետերոկարծրատիպերը (նրանց ինչպես գնահատողական-հուզական, այնպես էլ կոգնիտային մասը) և վարքի բնորոշ մեխանիզմները:

Այս նպատակով հարցազրույցի համար մենք կազմել ենք հատուկ հարցաթերթ: Պլանավորված էր կիսակառուցքավորված հարցազրույց անցկացնել, որը կընդգրկեր մեզ հետաքրքիր թեմաներ՝ համապատասխան հարցերի բլոկներով և, միևնույն ժամանակ, նախատեսում էր հարցազրույցների ընթացքում ծագած հնարավոր արգելքները՝ լեզվական իրազեկության և կրթության մակարդակի տեսակետից:

Հարցազրույցի հիմնական թեմաներն էին.

1. ուրիշ խմբեր իմանալը և վերաբերմունքը նրանց նկատմամբ,
2. սոցիալական տարածությունն այլ խմբերի հետ,
3. կարծրատիպեր սեփական և այլ խմբերի նկատմամբ,
4. հայացքներ խմբերի միջև իշխանության և սոցիալական կարգավիճակի բաշխման վերաբերյալ,
5. տարբեր խմբերի կողմից վերաբերմունքը վրաց լեզվի նկատմամբ:

Հետազոտման արդյունքում պարզվեց, որ շրջանում բնակվող խմբերը ծանոթ չեն կամ համարյա ծանոթ չեն ուրիշ խմբերի սովորույթներին և ավանդույթներին: Առանձնապես սա վերաբերում է աջարների և սվանների ենթախմբերին: Այս խմբերի մասին դատում են մակերեսային, ձևական հատկանիշների և մեկ անգամ տեսած վարքի կամ տեղի ունեցած պատմության ազդեցությամբ:

Սոցիալական տարածությունն այստեղ ավանդաբար բնակվող էթնիկական խմբերի միջև չափավոր է: Մեմանտիկական մակարդակում այն դրսևորվում է բարի դրացիության մեջ, չափավոր անհատական հարաբերություններում, վշտի և ուրախության

ժամանակ փոխազակցության հնարավորություններում:

Ինչ վերաբերում է հարաբերություններին այսպես կոչված նորաբնակների և հնաբնակների միջև, դրանք բնորոշվում են ավել լարվածությամբ: Մեծ է սոցիալական տարածությունը հայերի և աջարների միջև, նաև՝ հայերի և սվանների միջև: Կարելի է ասել, որ գնահատման սանդղակի վրա այս խմբերի միջև սոցիալական տարածությունը առավելագույն միավորով գնահատվեց և այն դրսևորվում է բացարձակ անհանդուրժողականության մեջ: Այս հարցի վերաբերյալ արտահայտություններն այսպիսին են. «Մենք բացի եկածներից բոլորի հետ հարաբերություն ունենք, եթե վիշտ ունենք կամ ուրախություն կամ ուղղակի գործ...»:

Էկոմիգրանտները (սվանները և աջարները) հետագոտմանը մասնակցող հայերի համար բոլորովին ընդունելի չէին: Չընդունելն արտահայտվեց նրանց նկատմամբ ինչպես հարևանության, այնպես էլ գործնական հարաբերությունների և, առավել ևս, գյուղի գործերի վճռման մեջ նրանց ընդգրկվածության մակարդակով: Բացահայտ է, որ չընդունելու հիմքը անվստահությունն է, որն այս խմբերից հոգեբանական, սոցիալական և ֆիզիկական վտանգի զգացումով է պայմանավորված: «Սվաններին չեմ հավանում, նրանք շատ վատ էին պահում իրենց, ասում էին, թե սա մեր հողն է և գնացեք այստեղից, կռիվ էլ եղավ, մարդ էլ սպանեցին: Աջարները թուրքեր են: Դրանք ինչ վրացիներ են, միայն նրանց լեզուն է վրացերեն: Եթե թուրքերը հարձակվեն, դրանք առաջինը կդավաճանեն վրացիներին: Դրանք ինչ ժողովուրդ են: Ուժով մտնում են հույների տները և այրում են սրբապատկերները, դուրս նետում տնից: Դրանց հետ ինչ ունենք ընդհանուր ...», – այսպես էր բնութագրում մի հայ աջարներին և սվաններին:

Նման պատկեր դրսևորվեց հույների կողմից աջարների և սվանների նկատմամբ վերաբերմունքում: Սվանների կարծրատիպը կապվում է ծուլության, անբարեխղճության, վտանգի հետ: Ահա, թե ինչ է ասում մի հույն կին այնտեղ ապրող սվանների մասին. «Այստեղ տներ կան, և սրանք այնպես

մտնում են, ոչ աշխատել են ուզում, ոչ էլ ուրիշ բան: Ինչի՞նչ են պետք այսպիսի մարդիկ իմ գյուղում: Եթե գողություն էլ չանեն, էլի հա, կհամաձայնեմ ... Գիշտ է քրիստոնյաներ են: Երբ քիչ են, ոչինչ, սակայն միասին շատ որ լինեն, մեզ համար վատ կլինի: Այնպես մեկ-մեկ ոչինչ: Սվաններն այնտեղ սպանեցին, այստեղ սպանեցին մեր տեղացիներին»: Հարցվողն աջարներին էլ է բնութագրում և նրանց էլ ավելի չի ընդունում. «Ահա, աջարներին չթողեցի, ես դպրոցում էի աշխատում, հապա, այս մահմեդականներն ինչիս են պետք: Դրանք աղբբեջանցիների նման մահմեդական հավատ ունեն: Ասում են, թե իրենք մեր եկեղեցին մզկիթի են վերածելու: Աջարներն այսպես են ասել մեր երեխաներին: Մեր գերեզմանոցն այդ եկեղեցու բակում է, հապա ինչպես կարելի է այսպես»:

Կրոնական հողի վրա ծագած անհանդուրժողականության մասին է խոսում այլ հույն հարցվողի ասածը. «Աջարները պղծեցին մեր սրբությունները ... Մտան մեր տները (նկատի ունեն լքված տները) գետին թափեցին մեր սրբապատկերները և անարգեցին»:

Նյութից երևում է, որ հայերի և հույների մեծ մասի համար այսպես կոչված էկոմիգրանտները ընկալվում են, որպես վտանգ պարունակող խմբեր, որոնք պարունակում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ նյութական և կրոնական վտանգ: Թեպետ, սոցիալական տարածությունը և անհանդուրժողականությունը աջարների նկատմամբ անհամեմատ ավելի մեծ է, քան սվանների նկատմամբ: Այս եզրակացությունն էլ ավելի են ամրապնդում մի հույն հարցվողի բառերը. «Քանի որ եկվորներ են, ավելի համեստ պետք է լինեն, եկածը պետք է իմանա, որ ինքը եկվոր է: Ինչ է, ես որ գնամ Սվանեթի, ինձ հող կտա՞ն: Ոչ այնտեղ, ոչ էլ Աղսարվարում (գյուղի անուն) չեն տա, այնտեղ մզկիթ են կառուցել: Այդ մզկիթ տեղացի աղբբեջանցիները չեն մտնում, իսկ աջարները գնում են, դրանք ուրիշ տեսակ ժողովուրդ են»: Մեկ այլ հույն հարցվող այսպես է արտահայտում իր վերաբերմունքը. «Սվաններին և աջարներին ես ուղղակի վրացերեն խոսող եմ համարում, թե չէ դրանց

վրացիներ չեմ համարում, չնայած սվաններին ես ավելի մոտ եմ համարում, մեկ հավատ ունենք»:

Այստեղ բնակվող հայերի համար ընդունելի չէ այսպես կոչված էկոմիգրանտների (աջարների և սվանների) մասնակցությունը գյուղի կենսահույզ հարցերի վճռմանը և, ընդհանրապես, գյուղի և շրջանի կառավարմանը:

Դաշտային հետազոտությունները ցույց են տալիս, որ հետազոտվող խմբերում ձևավորվել են կտրուկ շերտավորված էթնիկական կարծրատիպեր: Սրա հետ մեկտեղ, սեփական խմբի կարծրատիպերում ավելի կոգնիտային մասն է մղվում առաջին պլան, իսկ այլ խմբերի կարծրատիպերում առաջատար է հուզական-գնահատողական մասը: Սա առանձնապես լավ է երևում սվանների և աջարների հետերոկարծրատիպերում: Հետաքրքիր է նաև այն, որ այս փուլում ամենից ընդունելի խումբը հայերի համար հույներն են: Սա դրսևորվում է նրանց նկատմամբ վատահոսքային բարձր աստիճանի դրսևորման մեջ ինչպես հասարակական մարդկային հարաբերությունների, այնպես էլ ֆիզիկական և տնտեսական անվտանգության զգացման մակարդակով (վտանգ չի պարունակում ոչ տնտեսական, ոչ էլ կրոնական տեսանկյունից):

Իրականացված հետազոտության տվյալների վերլուծությունը բացահայտեց տարածաշրջանում առկա միջխմբային (հայ, ադրբեջանցի, հույն, աջար, սվան) փոխհարաբերությունների առանձնահատկությունները և դրանց հոգեբանական հիմքը սահմանող մեխանիզմը: Ուշագրավ է, որ տարածաշրջանում բացահայտած միջխմբային հարաբերությունները և տրամադրվածությունները պայմանավորում են բազմակողմանի և բազմաշերտ պատճառաբանական գործոնները:

Այնպես, ինչպես այլ բազմազգ և բազմալեզու հասարակություններում, այստեղ ևս էթնիկական խմբերի միջև լարվածության կարևորագույն գործոններից մեկը դավանանքն է: Էթնիկական խմբերի փոխադարձ անհանդուրժողականության

աստիճանը և սոցիալական տարածությունը նշանակալիորեն պայմանավորում են նրանց տարբեր և հաճախ փոխբացառող աշխարհայացքի համակարգերը, որոնք արժեքների, կենսակերպի, կարծրատիպերի և սոցիալական նորմերի մակարդակով են դրսևորվում և հաստատվում ամենօրյա հարաբերություններում իրականացված վարքի հիման վրա: Սրանք են՝ հուղարկավորման տարբեր կարգերը, աշխատանքի բաժանումը ընտանիքում և հասարակությունում, հայացքները կնոջ և տղամարդու դերի և գործառույթի մասին, վերաբերմունքը ամուսնության տարիքի նկատմամբ, տարբեր հայացքները աղջիկների և տղաների կրթության նկատմամբ և այլն:

Միևնույն ժամանակ, այս տարածաշրջանում ապրող խմբերի պատճառաբանական համակարգերում անչափ նշանակալի տեղ են զբաղեցնում առաջնային, այսպես կոչված բազիսային մակարդակի, կենսական նշանակություն ունեցող դրոպապատճառները, որոնք կապված են գոյության և սնվելու պահանջների հետ Ցավոք, հողի սակավության պատճառով էկոմիգրացիաների հետևանքով վերաբնակեցվածների մեջ (աջարներ, սվաններ) չի հաջողվում բավարարել այս պահանջմունքները (կամ մեծ ջանքերի շնորհիվ): Այսպիսով, վերջինս հանդես է գալիս որպես նրանց վարքի առաջատար պատճառաբանող: Ինչպես ցույց են տալիս հետազոտության հետևանքով ստացած տվյալները, հողի մշակումը և նրանից ստացած բերքը թե եկամուտը տարածաշրջանի բնակիչների կենսական նշանակության պահանջմունքների բավարարման գործնականում միակ միջոցն են: Թեպետ, բնակչության մեծ մասի, և առանձնապես էկոմիգրանտ սվանների և աջարների համար հողը պակաս մատչելի է: Էկոմիգրանտներում առաջնային, կենսական նշանակության պահանջմունքների անբավարարվածությունը բացասաբար է արտացոլվում տարածաշրջանում հասարակության սոցիալական հարաբերությունների համակարգի գործունեության վրա և միջխմբային

լարվածության իրական աղբյուրներից մեկն է:

Էկոմիգրանտներում ցածր է նաև ինքնագնահատման մակարդակը, ինչը պայմանավորում է սոցիալական անարդարությունը և այլ էթնիկական խմբերի նկատմամբ անհավասարության զգացումը:

Տարածաշրջանում ապրող միջխմբային սոցիալական տարածությունը նշանակալի չափով պայմանավորում է բոլոր խմբերի համար ընդհանուր հաղորդակցման լեզվի փաստացիորեն գոյություն չունենալը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ բնակչության մեծ մասը միայն սեփական լեզվին է տիրապետում, այսպիսով, նրանց միջև հաղորդակցությունը դժվարացած է: Չնայած վրացերենը պետական լեզու է, սակայն այս տարածաշրջանում նա միայն ձևական կարգավիճակ ունի, և այն չի կարող կատարել ընդհանուր հաղորդակցական լեզվի գործառույթ: Վերոնկարագրյալ էթնոհոգեբանական գործոնների ազդեցությամբ, վրաց լեզվի յուրացման ոչ պաշտոնական, բնական միջավայրում նրա օգտագործում չի հաջողվում: Չնայած ոչ վրացալեզու երեխաները և դեռահասները դպրոցում սովորում են վրացերենը, որպես երկրորդ լեզու, սակայն նրա իրացման միջավայր չի կանխելու պատճառով, նրանց գիտելիքը շատ աննշան է և ձևական: Այսպիսով, Ծալկայի շրջանում առկա սոցիալ-հոգեբանական կլիման հանդես է գալիս որպես պետական լեզվի յուրացման արգելքներից մեկը:

Ինչպես հայտնի է (Հեկհաուգեն, 1986, Էգեն, Կաուչակ, 2007), մարդու նորմալ հոգեբանական գործունեության և ինքնաիրացման համար անհրաժեշտ է նրան բնորոշ դրոպապատճառների ստորակարգային համակարգի հաջորդական իրացում: Թեպետ գոյություն ունեն տարբերվող կարծիքներ և փորձի վրա հիմնված տվյալներ կարևոր դրոպապատճառների որակի մասին, սակայն անվիճելի է, որ դրոպապատճառների ստորակարգության մեջ առաջինը և

բազիսայինը վիտալ պահանջմունքներն են, իսկ երկրորդական են սոցիալական, անձի անհատական սոցիալական դրսևորման և իրացման հետ կապված պահանջմունքները: Հետազոտման տվյալների վերլուծության հետևանքով պարզվում է, որ հետազոտվելիք տարածաշրջանի բնակչության մեջ (առանձնապես էկոմիգրանտներում) չի հաջողվում ինչպես ստորին, բազիսային, այնպես էլ միջին և համեմատաբար բարձր դրոպապատճառների գործարկումը: Այսպիսով, պատճառաբանական համակարգի իրացումը չի հաջողվում ստորակարգության համարյա ոչ մի մակարդակում:

Չիրացված պատճառաբանական համակարգերի ազդեցությունն արտացոլվում է միջխմբային հարաբերությունների վրա և վարքի մակարդակով դրսևորվում է այնպիսի հոգեբանական բնութագրիչներում, ինչպիսին է սոցիալական հեռացումը, հոգեբանական մակարդակում փոխադարձաբար չընդունելու և հանդուրժողականության ցածր մակարդակը և բացասական արժեքայնության տրամադրվածությունները:

Այսպիսով, տարածաշրջանում առկա բնակչության միջխմբային հարաբերություններն անչափ սպեցիֆիկ են: Դրանք պայմանավորված են բազմաշերտ հոգեբանական մեխանիզմով, որում ռեսուրսների և իշխանության անհավասար բաշխումով, դավանանքով, էթնիկությամբ և հաղորդակցման լեզու չունենալով պայմանավորված սոցիալական հեռացման և բացասական տրամադրվածությունների ֆոնի վրա առաջատար է ձգտումը կենսական պահանջմունքների բավարարմանը և նրա բավարարման դժվարացած հնարավորություններից բխող բացասական ապրումներին:

Այսպիսի հոգեբանական կլիման, պարզ է, խանգարում է տարածաշրջանի հասարակության ինտեգրմանը և խոչնդոտում է քաղաքացիական հասարակության ձևավորումը և զարգացումը:



**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Գաս, Սելինկեր, 2001 – S.M. Gass, L. Selinker, *Second Language Acquisition*, "LEA", 2000, New Jersey, London, 2001, 329-270
- Էգեն, Կաուչակ, 2007 – P. Eggen, D Kauchak, *Educational Psychology*, "Pearson", 2007, 296-333
- Վուլֆոլկ, 2007 – A. Woolfolk, *Educational Psychology*, "Pearson", 2007, 161-188
- Մայերս, 2000 - Д. Майерс, *Социальная Психология*, "Питер", 2000, 247-253
- Ստեֆանենկո, 2004 - Г.Т. Стефаненко, *Этнопсихология*, "Аспект Пресс", М., 2004, 272-305
- Հոգերանոթյունը և մշակույթը, 2003 - *Психология и Культура*, под ред. Д. Мацумото, "Питер", 2003, 575-656
- Հեկհաուզեն, 1986 - Хайнц Хекхаузен, *Мотивация и Деятельность*, т 1, "Педагогика", М., 1986, 112-116

**Mzia Tsereteli**

**Psychological characteristics of ethnic group relations in Tsalka region**

**The article is based on the materials of the research conducted in this region  
by Rustaveli Foundation  
(project "ethnic security aspects in polytechnic society")**

**ABSTRACT**

**The presented article describes psycho-social and cultural climate characteristics of the population of Tsalka region, as well as ethnic group relation specifics and their influence on the official language acquisition. Research is conducted by the interview method. The results revealed some main factors that interfere with the process of social integration of ethnic groups. One of the most important among those factors is the absence of common communicative language: Georgian language is the official language only formally, since the considerable amount of inhabitants speaks only their mother tongue. The given psycho-social climate is an obstacle for learning Georgian language.**